

ՅՈՒՆԱՆՆԵՍ ՆԻԿՈՂՈՍ ՏՐԱՅԶ

Աստուծոյ հրաշքով զտնողը .

Ծանօթ է բոլոր աշխարհքի աստուծոյ հրաշքով զտնողը որ զերմանական ազգին ինքնիշխան ազատութիւնը և միութիւնը սկսել տուաւ և իտալացւոցը զրեթէ ամբողջացուց : Միթէ այս զիւտը չեղաւ Պիսմարքի մեծահանճար քաղաքագիտին համար այն կէտը , որուն վրայ յենլով Արքիմեդէս իր լծակը՝ կը խոստանար բոլոր Նիւթական երկիրս շարժել : Ո՞ր կ'ապահովէ զմեզ թէ քաղաքական աշխարհին վիճակը ոչ թէ այս վերջին յեղափոխութիւններով հաստատութիւն մը առաւ , հապա 'ի նոր ինչ վերածնելու սկըսաւ : Սեպտեմբր թէ Պիսմարքի քաղաքագէտ մտաց այս նոր հրաշքնը եղաւ այն Պրոմեթէոսեան կրակը՝ որով զհնաւցեալ աշխարհքս նոր հոգիաւորելու սկսաւ , պէտք է որ այն հրոյն ստեղծող հանճարն ալ հաւասարապատիւ ճանչցուի ընդ Պիսմարքայ , որ էր Յովհաննէս Նիկողոս Տրայզ : Համառօտ է իրեն վրայ պատմելիքնիս , և իրեն այս վերջին անուանը և համբաւոյն համեմատ չէ իրեն ծննդեան և վարուց պատմութիւնը , ճոխ և փառաւոր . բայց նոյն իսկ նուաստ աստիճանէ անուն մը 'ի վեր բարձրացրնելը , նոյն իսկ հանճարոյն առաջին վկայութիւնն է :

Յովհաննէս Նիկողոս Տրայզ բրուսիացի էր , և ծնաւ 1787 նոյեմբերի 22ին Էրֆուրդի մօտ Սէօմմերտա պզտի քաղաքը : Հայրը դարբին էր և իրեն պզտի խանութովը բաւականապէս առաջ եկեր էր : Պր . Տրայզ երբ հօրն արհեստին սկզբունքները սորվեցաւ , գաւազանը ձեռքն առած և պարկն ուսը զարկած՝ ճամբորդութեան ելաւ ասդիս անդին պտրտելու և աշխարհք տեսնելու , ինչպէս որ կ'ընեն աւատրիացի արհեստաւորներն իրենց արհեստը կատարելագործելու և նոր նոր երկիրներ տեսնելու համար :

Եէնայի պատերազմի դաշտին մէջ

զինուց վրայ ըրած զիտողութիւնները , և Բարիզ ըրած ուսմունքները ետքէն պիտի տեսնենք : Հիմա այս միայն ըսենք որ երբ իր հայրենիքը դարձաւ ալ անկէց ետքը առջինին պէս սովորական դարբին մը չէր : Տեսակ տեսակ ըրած փորձերն ու մեծամեծ և յառաջացեալ մայրաքաղաքաց մէջ ստացած ծանօթութիւններն և երևելի գործատանց մէջ աշխատելովն ու բանելովը՝ զգալապէս թէ իրեն գործունէութիւնն արթնցեր և թէ հնարագիւտ հանճարն սրեր էր : Որով 1822ին Քրոնպիլէր վաճառականին հետ ընկերանալով՝ երկաթեղինաց գործատուն մը բացաւ , որ Գերմանիոյ մէջ առաջին խանութը սեպուեցաւ , և հոն թէ ձեռքով և թէ մենքենայով զամեղէն և ուրիշ երկաթէ տեսակ տեսակ գործիներ կը շինէին :

1824ին ալ երկրորդ գործատուն մը կանգնեց հրացանի գալքսուշի , որուն համար արտօնութիւն ստացաւ . և երրորդ գործատուն մ'ալ՝ մենքենաներու համար : Բայց 1828ը եղաւ իրեն անունն հռչակող և զինքը պսակող տարին , յորում հնարեց ասղեայ հրացանը որուն սովորական հրացաններէն ունեցած գլխաւոր տարբերութիւնն այս է որ հրազինին գնտակը և վառօդը ետեւի կողմէն կը լեցուի . և մինչև որ զայս 'ի լոյս բերաւ , ոչ դք կրնայ տարակուսիլ թէ քանի քանի ձախորդութիւններ և դժբաղդութիւններ գլխէն անցան : Անհրաժեշտ բաղդ , որ հասարակ է ամեն գիւտ գտնողներու :

1842ին Բրուսիոյ տէրութիւնը , 60,000 ասղեայ հրացանաց շինութիւն յանձնեց իրեն , առատաձեռնելով բոլոր պէտք եղած միջոցները : Ա՛լ 1848 և 1849 տարիներուն մէջ փորձառութեամբք սկըսաւ վերջապէս գիւտին յարգը ճանչցուիլ , և անկէց ետքը սկսան թափիլ վրան պատիւ և մրցանակք իր տէրութենէն՝ որ չէր կրնար անտարբեր կենալ : 1854ին տէրութեան խորհրդական ընտրուեցաւ . 1864ին ալ ազնուականութեան պատիւն ընդունեցաւ , որ Բրուսիոյ մէջ մեծ պատիւ է : Բայց ա.

մեն բանէ աւելի անցեալ տարուան պա-
տերազմն եղաւ պատճառ որ փառաւոր
համբաւ հանեց թէ գիւտին և թէ զայն
հնարողին :

Հիմա թէ և 78 տարուան , սակայն
դեռ կայտառ՝ գլուխ կեցած իր գործա-
տանը՝ նորանոր գիւտեր ճարելու դիտ-
մամբ աշխատելէն չդադրիր : Պր . Տրայզ
ասղեայ հրացանը գտնելէն ու կատա-
րելագործելէն զատ՝ նոր տեսակ թնդա-
նօթ մ'ալ գտաւ . բայց 'ի վերայ այսր
ամենայնի այս իր գիւտը Բրուսիոյ ա-
ռանձին պաշտօնական ընկերութիւն մը
քննելու ետեւէ է :

Յետ այս կարճառօտ կենսագրական
տեղեկութեան , դնենք հոս համառօ-
տիւ նաև լընտրնի Դալմզ օրագրին անգ-
ղիացի թղթակիցներէն մէկուն ասոր
տունն ըրած այցելութիւնն ու խօսակ-
ցութիւնը :

Էրֆուրդի մօտ Բրուսիոյ Սէօմմէրտա
պզտի քաղաքը մտնելով , ճանապար-
հորդը՝ առանց շատ դժուարութիւն կրե-
լու՝ կը գտնէ հոնտեղի հռչակաւոր քա-
ղաքացւոյն բնակարանը : Պր . Տրայզ
թէ և աղքատին՝ բայց վայելչատեսիլ
տան մը մէջ կը բնակի , որուն դրանը
ճակտին վրայ ըստ հին աւստրիացի սո-
վորութեան՝ այս գեղեցիկ իմաստը դը-
րուած է . Այօթե ոչ աշխատէ , որ ար-
հեստաւորին բաղդին վսեմ մտաց խոր-
հրդաւոր նշանն է :

« Ներս մտայ և սկսանք խօսիլ . քիչ
մ'ատենէն խօսակցութիւննիս այնպէս
վառուեցաւ և այնպիսի սերտ մտերմու-
թիւն մը ցրցուց ինծի որ սիրտ առի ի-
րեն գիւտին վրայ խօսք բանալու , զար-
մանք ցուցնելով միանգամայն որ մար-
դիկ շատ աւելի գիւտին վրայ կը զմայ-
լին քան թէ անոր հնարողին :

— Զարմանք չէ , պատասխանեց Պր .
Տրայզ . հոգս ալ չէ ամենեւին , բաւա-
կան է որ գիւտս բանի մը գայ :

— Ատոր վրայ բնաւ մի տարակու-
սիր :

— Կրնամ տարակուսիլ երբ անու-
նը մեծագոյն ըլլայ քան թէ արդիւն-
քը : Վասն զի կը տեսնեմ որ առհասա-

րակ օրագիրը հրացանիս վրայ կը խօ-
սին , բայց երբոր մեռելոց և վիրաւորաց
ցանկը մէյմը աչքէ կ'անցունեմ , կար-
ծածէս աւելի տկար կը գտնեմ զայն
համեմատութեամբ իրեն զօրաւորու-
թեանը :

— Ի՞նչ կ'ըսես :

— Այո . ինչու որ մեր մեռելոց և վի-
րաւորաց թիւը անբաւ է . վասն զի որ-
չափ որ կը յուսայի մեր գործիքէն՝ ըստ
այնմ արդիւնք չտեսայ : Իրաւ է որ ո-
րոշ գաղափար մը չկրցայ ունենալ թէ
ինչ ելք ունեցաւ 200,000ով կազմուած
բանակի մը պատերազմը որք այս գոր-
ծիս գործածեցին , որով կը ստիպուիմ
հասարակաց կարծեացը հետեւելու :
Բայց պէտք է ալ խոստովանիմ , որ ընդ
դէմ հաճութեւս՝ որ կը զգամ տեսնելով
գործիքս՝ վերջապէս փառաւորեալ ա-
մենէն այնչափ և այնչափ վիճաբանու-
թեանց մէջ , սակայն այն հասարակաց
անորոշ խօսքերովն ես գոհ չեմ կրնար
ըլլալ : Բաց ասկէ ուրիշ պատճառներ
ալ ունիմ իմ գիւտիս անկատարու-
թեանը վրայ տժգոհալու , աւելցուց ին-
քը մատնանիշ ցուցնելով ինծի սգազ-
գեստ պզտի աղջիկ մը , որ նոյն ատեն
սենեակը կը մտնէր . ասիկայ դասերս
աղջիկն է , ըսաւ , որուն գնդապետ հայ-
րը ֆէօնիկկրացի պատերազմին մէջ ըն-
կաւ : Այո , շատ կռիւներու մէջ մենք և
Աւստրիացիք զարնուելով՝ հաւասար
կորուստ ունեցանք . թէպէտև այս բա-
նիս պատճառը թշնամւոյն բռնած յար-
մար կէտերն ու դիրքերը կրնան սե-
պուիլ , սակայն արդիւնքը այսպէս պէտք
չէր ըլլալ :

Խօսակցութիւնն առաջ երթալով՝
հարցուցի իրեն թէ արդեօք պատերազ-
մի դաշտ մը տեսեր է :

— Անգամ մը միայն , պատասխա-
նեց , և այն ալ բաւական ժամանակ է .
այսինքն 1806ին Նաբոլէօնի Եէնայի
պատերազմը . և զայն ահա տեսնելով
մտացս մէջ ծագեցաւ Բրուսիոյ զէնքը
կատարելագործելու գաղափարը , իբրև
թէ՝ Բրուսիան ալ օր մը առաջին կար-
գի զօրաւոր զինուորութիւն մ'ունե-

նայ : Բայց ես այն ատենը դարձնի մանչ մ'էի, որ տոպրակս ուսս զարկած, ինչպէս որ կ'ընեն մեր աղքատ պանդուխտները, ասդիս անդին կը քալէի : Գաղղիա գնացի, ուր միայն մարդ կըրնար այն ատենուան խառնակութեան մէջ բան մը սորվիլ : Ուստի երբոր ինչպէս ըսինք, Եէնա հասայ, հոկտեմբերի 15 էր. հոն դաշտին մէջ առաջին անգամ դիականց կոյտեր տեսնելու առիթըն ունեցայ : Հիմա չեմ կրնար այն ահրանկէց տեսարանին մտացս վրայ սեւռած տպաւորութիւնը բացատրել քեզի : Գետնէն հրացան մ'առի ու սկսայ զննել զայն : Շիտակն ըսելով ամենևին անոր նման և անկէց աւելի անկատար զէնք չէի տեսած և չեա կրնար երևակայել. 1799ին գաղղիացի դայլախազով հրացանը այն ժամանակին լաւագոյնն էր : Այն օրէն սկսայ մտացս մէջ յեղյեղել բրուսիացի հրացանը կատարելագործելու ճամբայ մը. բայց կրնաս գուշակել թէ ինչպէս այսպիսի գաղափար մը վերացեալ և անորոշ է հասարակ դարձնոյ մը գլխոյն մէջ : Բարիզ հասայ, ուր նորանոր տեղեկութիւններ ստանալով արհեստիս նկատմամբ, այնչափ գոհ եղայ որ միտքս դրի ալ ճամբայ ելնելու և հայրենիքս դառնալու : Շատ անգամ երևելի սպայի մը քով կը յաճախէի, որ էր Բաուլի վիւրդէմպէրկ հազարապետը, որ իրեն մեծին օրինակին հետեւելով ինքզինքը Նաբոլէոնի նուիրեր էր : Գիշեր ու ցորեկ չէի դադրեր գործիքիս վրայ մտածելէն, հազար ու մէկ փորձեր կը փորձէի, բայց ՚ի զուր : Այն ատեն ուղեցի 1799ին հրաւիրուած հրացանին նմանողութեամբը շատանալ : Եւ մինչդեռ այս խորհրդոյս մէջ տատամսեալ կը ծփէի, յանկարծ մեծ քայլ մ'առի փորձառութեանս մէջ երբ Բաուլի հազարապետն 1809ին իմացուց ինծի որ կայսեր կողմէն իրեն հրաման եկեր էր հրացան մը շինելու որ ետեւէն լեցուի :

— Բայց Նաբոլէոնի միտքը ինչպէս ընկեր էր այս բանս : Արդեօք ինքնիրեն գտեր էր թէ ուրիշէն իմացեր : Երկու

դարէ ՚ի վեր է որ այս ետեւէն լեցուող հրացանը գտնուեր է, և Գերմանիոյ քանի մը զինարանաց մէջն ալ կը գրտնուին ասոր հին գաղափարով շինուածներ :

— Շիտակը չգիտեմ. միայն այս է գիտցածս որ ասիկայ ինծի համար մեծ լոյս մ'եղաւ : Հասկըցայ որ այս է եղեր ճիշդ գաղափարը և նաեւ ամենէն պարզը. որուն օրինակ են նաեւ այն հրացանիկները զորս տղոց ձեռքը կու տան խաղալու : Շատ ամիսներով կը փափագէի իմանալու այն հրացանին գիւտը զոր Բաուլի կը շինէր, որով գիշերները մտածութենէն քուսս չէր տաներ : Բայց այն հրացանը բանի մը չեկաւ. իրեն կատարելութիւնը այնչափ էր միայն որ քիչ ժամանակ մը, և այն ալ վարժութիւն ունեցող մարդիկներէ միայն կըրնար գործածուիլ, որով և պատերազմի գրեթէ անպէտ : Ի վերայ այսր ամենայնի Բաուլի ՚ի վարձ 1000 Նաբոլէոն ոսկի, լեզէոնի պատուանշանն և տասը տարուան առանձնաշնորհութիւն ընդունեցաւ Նաբոլէոնէն. բայց վհատելով միտքը փոխեց և հրաժարեցաւ, ես ալ ըրածին հաւանեալ էի :

— Անշուշտ շատ նեղութիւն կրած պիտի ըլլաս քու այս գիւտդ գտնելու համար :

— Ի՛նչ նեղութիւն, ի՛նչ վիշտ, ի՛նչ դժուարութիւններ դիմացս ելեր են չեա կրնար երևակայել : Բայց ՚ի նիւթական նեղութենէն, որ հիմակուան յառաջացեալ ժամանակս ալ չներեր, կրնամ ըսել որ երեսուն տարուան մէջ կրեր եմ ինչ որ մարդս կրնայ կրել : Ամենէն իբրեւ խենդ և յիմար համարուեցայ, աւմենուն զրպարտութեան, ծաղու և արհամարհանաց նիւթ եղայ, և այլն, որ մէկն ըսեմ : Միայն Բրիւմ ընդհանուր քաղաքապետին՝ որ այն ժամանակը զօրապետն էր, և ֆրեդերիկ Գուլիէլմիս Գլխաւորին վիցլէպըն թիկնապահին պէսք է որ շնորհապարտ ըլլամ իրենց առ իս ցուցած անբաւ երախտեացը : Հոս Սէօմմէրտայի մէջ գալստոյի դործարան մ'ունէի, և անոնց վրայ աշխա-

տելու ժամանակս՝ յանկարծ հայելա-
վառ¹ ըստած բաղադրութիւնը գտայ
(որ հրացանին ասղան ծակելովը կը
բռնկի, և ասիկայ է բրուսիական հրա-
ցանին թղթուկին² էն տակի նիւթը։)

Յետոյ Պր. Տրայզ պատմեց ինծի այն
ամենայն հնարքները որ պէտք եղեր են
այս իրեն գիտը ընդունելի ընել տա-
լու համար, նոյնպէս բոլոր ընդդիմու-
թիւնները որ իրեն արհեստակիցներէն
անընդհատ կ'ընդունէր, Ետքէն այսպէս
խօսքը առաջ տարաւ։

Պէտք է որ ասղեայ հրացանը մեծա-
գոյն կատարելութեան մը հասնի. ըսել
կ'ուզեմ թէ մեր վիրաւորաց և մեռե-
լոց թիւը նուազագոյն ըլլայ. հաւանա-
կան է որ այս պատերազմէս ետքը ա-
մենայն ազգ իրենց զինուոց մէջ պիտի
մտցնեն այս նոր ասղեայ հրացանը։
Իրաւ այս մեր բրուսիական հրացանին
գաղտնիքը չեն գիտեր, բայց անշուշտ
բան մը կը գտնեն որով քիչ շատ անոր
տեղը բռնէ. բաց ասկէ՝ այս օգուտն ալ
կ'ունենան որ մեզի հետեւելով՝ կրնան
մեր զէնքին պակասութեանց դիմացն
առնուլ, մինչդեռ մենք ստիպուած ենք
հիմա ինչպէս որ է այնպէս պահելու։
Ես աւելի Գաղղիացւոցմէ կը վախեմ,
վասն զի շատ համարմունք ունիմ ա-
նոնց զինուոց գործարանաց վրայ. և թէ-
պէտ անոնք մեր հրացանին գաղտնի-
քը չունենան, այլ այսու ամենայնիւ
անտարակոյս եմ որ կրնան այնպիսի
կատարելութիւններով ասղեայ հրա-
ցան մը հնարել՝ որ թերեւս դժուար ըլ-
լայ հիմակուան մեր ունեցած զինուոց
վրայ աւելցնելու։ Միով բանիւ պիտի
ջանան զմեզ գերազանցելու իրենց զի-
նուոց առաւելութեամբը, բայց ես կ'ը-
սեմ որ չկրնար ըլլալ և պիտի չըլլայ։

— Ապահով եմ որ ամենայն հնարք
կը բանեցնեն անոնց դէմը առնելու։

— Այո, բայց միթէ ուշ մնացած չեմ։
Հիմա եօթնասունըութ տարուան եմ.
անոր համար պարտքս էր մտածելը, որ
հակառակ կողմէն այսպիսի ճիգն մը

կրնայ ըլլուիլ. բայց ես հիմա կրնամ
քեզի ցուցնել թէ օտար ազգաց ընե-
լու կատարելագործութեանցը դէմ ինչ
նոր կատարելութիւն պատրաստեր եմ
իմ գործւոյս վրայ։

Այս խօսքերն ըսելով՝ ձեռքը հրա-
ցան մ'առաւ որ դրսուանց նորատե-
սիլ երևոյթ մ'ունէր, և սկսաւ ինծի ա-
նոր շէնքը բացատրել։

— Խնդրեմ քիչ մը կեցի, ըսի իրեն,
վասն զի գիտնաս որ կ'ուզեմ գրի վրայ
առնուլ որչափ որ միտքս իյնայ այս մեր
խօսակցութենէն. և ասով քիչ օրէն
հազարաւոր ընթերցողաց պիտի ճանչ-
ցուիս. ուրեմն խնդրեմ ըսէ ինծի թէ
ինչ աստիճանի պիտի կարենամ բա-
ցատրել այս զէնքը, որուն ըլլալն իսկ
անծանօթ է դեռ ամենուն։

— Ես ալ կ'աղաչեմ որ զէնքին ստու-
րագրութիւնը չընես, ըսաւ ինծի. մի-
այն ըսէ, եթէ կ'ուզես, որ այս հրա-
ցանն երեք ու կէս լիպրէ նուազ կը
կշռէ քան զմեր սովորական հրացան-
ները, և բոլոր երկաթէ է, և թէ իրեն
գնտակին նետուածքը և ապահովու-
թիւնը մեր հիմակուան հրացանից հա-
ւասար է, և աւելի յարմարագոյն է պա-
տերազմի, զոր ոչ ջուրն և ոչ կրակը
կրնան ֆնասել, և թէ գերազանց է քան
զայլ ամենայն պարաւոր հրացանս, և
թէ մեր սովորական հրացանէն երեք
դալէր պակաս կ'արժէ։ Հիմա քեզի
բացատրեմ նաև թէ ինչպէս գործա-
ծելու է. վասն զի պէտք է որ այսպիսի
զէնք մը այնպէս պարզ ըլլայ որ ամեն-
քը առանց դժուարութեան կարենան
գործածել։

Քանի մը վայրկենի մէջ Պր. Տրայզ
սորվեցուց ինծի անոր գործածութեան
կերպը, և ես ամենայն արագութեամբ
զայն պարպեցի։ Չէնք գործածելու համ-
բակ չեմ, աշխարհիս վրայ առաջին կար-
գի՝ ամեն տեսակ և ամենայն մեծու-
թեամբ հրացանները ձեռքէս անցեր են
և պարպեր եմ։ Արդ իմ վեր 'ի վերոյ
բրած դատաստանովս պէտք է ըսեմ, որ
այս հրացանին պէս անթերի և այնպէս
կատարեալ զէնք մը երբէք չեմ տեսած։

¹ Գերմ. Zundspiegel.

² Գլ. Cartouche.